ԱՇԽԱՐՀԸ ՈՐՈՇ ՁԱՓՈՎ ՐԱՖՖԻԱՅԵԼ Է

Հրապարակված է՝ ՄԱՐԱՏ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ, civilnet.am, շոռեֆշաբթի, 13 մարտ, 2013

Հացադուլի չորրորդ օրն է: Ինչ-որ բան հստակ է: Ի՞նչ,- կհարցնենք:- Չգիտեմ: Հույս ունեմ՝ Ռաֆֆին գիտի: Նա խոսում, ասում է՝ հանրահավաքներին, մամուլի ասուլիսներին, բարևելիս: Ասում է արևելահայերենի ու արևմտահայերենի խառնուրդով: Ափսոս խառնուրդից միայն արևելահայերենին եմ տիրապետում: Տիրապետում, ոչ թե՝ հասկանում ընդհանուր գծերով կամ ենթադրելով:

Խառնուրդը, անշուշտ, հասկանալի է, բայց կառուցվածքը, միտքը, որը կաղապարված է այդ խոսքում, հասկանալի չէ: Հետագիծն էլ է հասկանալի, բայց ինչ նկատի ունի նա, երբ ասում է՝ «Սահմանադրական դատարանն ունի վերջին հնարավորությունն իր հետագիծը մաքրելու»:

Երկար, շատ երկար նա խոսում էր ինքնաբացարկի մասին: Բառն ինձ ոչինչ չէր ասում: Բառ է, իր համար բառ: Նշանակություն ունի, կիրառվում է, ասոցիատիվ կապեր ունի, կոննոտացիաներ՝ հիմնականում ընտրություններից առաջ (!) թեկնածուներից մեկի ինքնաբացարկի, հետ: Բայց այն հրաժարական չէր, առավել ևս՝ «Սերժիկ հեռացիր» ասոցիատիվ կապերով: Ու հիմա նոր եմ հասկանում, որ Ռաֆֆու ասած «ինքնաբացարկը» իմ բառապաշարի «հրաժարականն» է, թեև առանց «Սերժիկ հեռացիր»-ի ու «մոնղոլ-թաթարի», ու դեռ պարզ էլ չէ, արդյոք մենք նույն սիգնիֆիկատի մակարդակում ենք:

Իհարկե, նա երբեմն փորձում է նաև ինձ համար հասկանալի խոսել՝ «ասում ենք՝ էլ երբեք չի լինելու զադնայա սկորոստ»: Դե իհարկե, նա նկատի ունի՝ զադնի չի դնելու: Բայց թե՝ հասկացա: «Պօեզդ նե ուշյոլն» էլ էր հասկանալի, չնայած էլի ռուսերենով էր:

Ու երբ նա ասում է՝ «դա իրենք կանեն իմ դիակի վրա», ինձ համար պարզ չէ, արդյոք նա նկատի ունի «չերեզ մօյ տրուպ»-ի հայերեն կալկան՝ «դա իրենք կանեն իմ դիակի վրայով»: Չգիտեմ, չեմ հասկանում: Չեմ հասկանում «Աշխարհի ռաֆֆիական նաիվ պատկերի» մակարդակում: Մենք տարբեր ենք (տարբերությունը երբեմն սփյուռք-ով կազմվող բառաբարդումներն են արտահայտում):

Լևոն Տեր-Պետրոսյանը պարբերաբար խոսում է 2008-ի քաղաքական համալսարանի մասին: Մեզանից շատերը քաղաքական կրթություն այդ համալսարանում են ստացել՝ իր մեթոդով, աշխարհի իր պատկերով ու իր բառապաշարով, միֆական իր շղարշով, իր տրամաբանությամբ և այլն, և այլն:

Այսօր 2008-ը չէ: Ուզում ենք, չենք ուզում, գնահատում ենք, չենք գնահատում, «թռնում ենք 2008-ի վրով» կամ «չենք թռնում»: Ռաֆֆին այլ կերպ է խոսում: Գործելը դեռ մի կողմ: Դա դեռ ժամանակ կունենանք տեսնելու: Նա փորձում է նաև ինձ հետ ու ինձ հասկանալի լեզվով խոսել: Ես էլ փորձում եմ հասկանալ: Արդյունքն առայժմ այն է, ինչ նախընտրում եմ անվանել «իռացիոնալ իմպրովիզ»:

Ի՞նչ նկատի ունեմ:

Ժողովրդական իմաստությունը (ասել է թե՝ հայրս ու նրա հայրը) ասում է՝ դևին դժոխքը պիտի ցույց տալ: Մեկ այլ իմաստություն էլ ասում է՝ «Ասիմետրիկ է պետք դևի հետ, մարդ ես, մեկ էլ տեսար՝ ոչ բոլոր գլուխները հասցրեցիր թռցնել»: Հիմա սիմետրիկ է պետք, թե ոչ այնքան սիմետրիկ, էլի ժամանակը ցույց կտա: Մուհամեդն է ավելի ծանր (կշռով), թե սարը, էլի ժամանակը ցույց կտա:

Ժամանակն ամեն ինչ ցույց կտա։

Թվում է, անսահմանափակ ժամանակ ունենք, ու մեր երեխաներին հատկացված ժամանակներն էլ է մերը։ Հիմա չլինի, մի հինգ տարուց կլինի՝ Մոսկվան միանգամից չի կառուցվել (Երևանը երկու հազար յոթհարյուր չգիտեմ քանի տարում այդպես էլ քաղաք չդարձավ, սա, ի դեպ)։ Չգիտեմ, ունենք ևս հինգ տարի, կամ դրանից հետո էլի հինգ տարի ու այսպիսի հինգ տարիների անվերջ շարան։

Ես չգիտեմ, ես Ռաֆֆիի արևելա-արևմտահայերեն աշխարհընկալումը՝ բառաբարդված «սփյուռք»-ով, չեմ հասկանում։ Միգուցե շատերը չեն հասկանում։ Բայց ես ժամանակ չունեմ։